



—Այլ գիշերները դուրս կ'ելլամ որ...
զազաններուն չ'անդիպիմ... կարծեմ թէ այս
նախադասութիւնը բաւական պերճախօս է մեր
դեռ փոքրիկ, շատ փոքրիկ parvenu ներու համար
հասարակական մեծ parvenu մը:

Ես ըստ իս քանի որ միջինը չ'ունիմ,
հիմակուհիմայ բան մը չ'եմ ընէր, մինչև որ
ունենամ... իսկ եթէ Լաֆ ըրա թիքով թիշերս,
սեկիզ գասար ես պիտեմ...

ՄԵՆԻԿ

(մտադրանքը յետագայ թիւերով)

Մանօթ. — Պ. Մենիկի սոյն պատաս-
խանը գոհացուցիչ գտնելով Տ. Ս. Օ. կը
նուիրէ իրեն պատկերազարդ Cosmographie
մը և կը ծանուցանենք ուրեմն Պ. Մենիկի
որ Արշալոյս րի Խմբագրատունէն ստանայ
վերոյիշեալ հատորը:

ԽՄԲ.

ՏԻՐՈՒՆԻ

—o—

Եղիպտոսի հայ վաճառական դասուն
ամենէն փայլուն անդամներն Մեծ. Տի-
արք Գրիգոր և Կարապետ Մեղիպտոսյան
յան ձին իրենց քրոջ և Տիարք Թորոսի, ձի-
ւան և Սահակ Չալաքեան յանձին իրենց
մօր՝ դառնակիծ կորուստն ունեցան ող-
բալով մահը:

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԳԱՅԵԱՆԷ
ՉԱՅԼԱՔԵԱՆԻ

որ հանգեաւ ի Տէր ի հասակի 64 ամաց:
Յուդարիկաւորութեան արարողութիւնը
յոյժ հանդիսաւոր եղանակաւ կատարուե-
ցաւ անցեալ կիրակի օր քաղաքիս Ս. Պօ-
ղոս Պետրոս եկեղեցւոյն մէջ՝ ուր առաջի-
րիկութենէ փոխադրուած էր հանգուցելոյն
մարմինը:

Հանգէսին նախագահեց Ս. եկեղեցւոյս
քարտիչ Տէր Վահրամ Մ. Վ. Ալաբեան,
իւր շուրջն ունենալով Տէր Գրիգորի և Տէր
Բարթոլոմէոս վարդապետները և քահա-
նայից դասը և ներկայ էին վաճառական դա-
սուն ամենէն աչքի զարնող ներկայացու-
ցիչները և ժողովրդեան խուռն բազմութիւն:

Թաւարտ եկեղեցական արարողութեանց
փառաբար թափող մը կազմուեցաւ որուն
առջևէն կ'երթային չորս հեծեալ և տասը
հետեակ ոտիկաններ, կրօնական հասարա-
կութեանց բարապանները, դպրաց դասը և
եկեղեցական հարք և իսկ դադարակառքին
ետեակն կ'երթային հանգուցելոյն սգակիր
որդքեր և եղբարքը, Թաղ. Խորհրդոյ ան-
դամները և ժողովրդեան խուռն բազմու-
թիւն և Երեսունէ աւելի գեղեցիկ ծաղկե-
փունջեր հինգ կառքերու մէջ կը հետե-
ին թափողին:

Թափողը քաղաքին գլխաւոր պողոտա-
ներէն անցնելով կանգ առաւ Շէրիֆ քաչա
փողոցին ծայրը, ուրիկ յուղարկաւորք կառ-
քերով գերեզմանատուն ընկերացան դա-
դարին:

Մեր խորին ցաւակցութիւնները կը
յայտնենք հանգուցելոյն եղբարց և վա-
ւակներուն:

Աղբ. ք. 26 | 10 1901

ՄԱՐՄԱՆՈՅՍ

Գիշեր է խողով, գիշեր գեղեցիկ,
Աղամանդներով զարդարուած գիշեր,
Այս գիշերներուն պէս անմոռացիկ,
Որ ալ չ'են ինչ ալ, եթէ ոչ յուշեր,
Պարզող սրբին մէջ խաւարոյնի գիշեր:

Այս տեղ իսկ, գերկը անոնց շատերուն,
Երջանկութիւնն իս օրօրած է միշտ,
Ու երբ փայլած է Արշալոյսն հետուն,
Լոկ այն տանները դազցած եմ վիշտ,
Տարրնջած որ չ'է գիշեր եղած միշտ:

Ակնարկներս հիմայ քանի՛ կուզան ման,
Վերը, կոպտյան մէջ խորհրդալի,
Վարն հետակներն այն իրեն սահման,
Այս տարածութեան վերայ, կը հալի
Սիրտս, իր կրօններուն մէջ խորհրդալի:

Հողիս, թախտամած, չ'հառազայթեր,
Ու ես անաղաղակ չ'նչի կարող չ'եմ,
Մութ այտերէս վար արցունքի շիթեր,
Դժնէ ներկայիս գրկի կը հառաչեմ, —
Նոյնն է ամեն բան, լոկ ես նոյնը չ'եմ:

18 Հոկտ. 1901 Հէլուան ԳԻՐՈՒՍԱՆ

ՄՈՒՐԻ ԴԵՊԿԵՐ

4 Պօլիս 16 Հոկտ.

Մուշէն եկած լուրերը շատ ուշ հասած են
եւ ուրիշ բան մը չ'են խօսիր Մուշի վրայ:
Դարձեալ կ'ըսեն թէ կռիւ մը ծագած է հոն
առանց մանրամասնութիւններ տալու:
Կ'ըսեն թէ Պիթիւի վախ շիւնի պէտքին, էրզրու-
մի գորարմինի հրամանատար Մէհմէտ ալի բաշա-
յի, Բէմիք Էֆէնդի, Վանի Ռուսական հիւպա-
տոս Ֆուստուքի, և վաչա հետեակագորք եւ
գումարակ մը հեծեալ զօրք հասնելէն յետոյ
նոր բան մը պատահած չէ:
Դրկուած զօրքերը չըջակները տարած են եւ անոնց հասնելուն
պէս կողոպուտը եւ ջարդը դադարած են:

Գլխաւոր զէպը պատահած է Մօկուսքի
մէջ ուր ինչպէս որ հետադրուած էր, 50 հայ
բանտարկուած էին, այդ գի. ինչ շուրջը Շէրիֆ
աղա անուն քիւլուտ ցեղապետի մը գիտելը
գումարուած ըլլալուն համար:
Հիմա կը գիտցուի թէ ո՞վ սպանած է Շէրիֆ աղա, և Սիւլեյմ անուն
հայ երիտասարդ աղջիկ մըն է որ ֆօթիւնը Շէ-
րիֆ աղան բռնաբարած էր:
Հայ աղջիկը Իբրը նոր Դալիլա, դաշունահար ըրած է զայն եւ իր
երկու եղբայրներուն օգնութեամբ դիակը դաշ-
տին մէջ ձգած է, գիւղէն բաւական հեռու:

Բանտարկուած 50 հայերէն 7ը բանտին մէջ
մեծած են, այսպէս սպանուած քիւլուտի մը հա-
մար, գիւղ մը կողոպտուած է, հունձքեր այրե-
ուած են, 50 մարդ բանտարկուած են որոց 7ը
մեծած են, մինչդեռ անոնց ըրած թուրք սպան-
ուածները, կողոպուտի, գողութեանց, հրկե-
րու եւ բռնաբարութեանց համար, եւ ոչ մէկ
թուրք կամ քիւլուտ բանտարկուած է:

Մօկուսքի միջազգայն քննող դատարարը ա-
մեն միջոց ի գործ կը գնէ կոր համոզել տալու
համար, որ հայերը նոյն իսկ սպանած են ի-
րենց կրօնակիցները եւ ոչ թէ քիւլուտը, նը-
մանապէս կը ձեռնարկուին այն հայերը որ Պա-
լատ հետազիւր զարկած էին պաշտպանութիւն
խնդրելու համար:

Բառէնի մէջ գիւղին մէջ (ոտս-թուրք
սահմանագրութիւն) պահակախումբին հազարապե-
տը 30 զինուորի հրաման տուաւ Ծարածա գիւ-
ղին Շողակաթ անուն աղջիկ մը առեւանդելու:
Աղջկան հարկանկիցները դիմադրել ուզած ըլ-
լալուն համար 15 հոգի վերաւորուած են եւ
աղջիկն ալ տուեւանդուած է:
Էրզրու-մի ընդհա-
նուր կառավարիչ Ռէուֆ բաշան, աղջիկը ետ
առնել տուաւ եւ 12 զինուոր ալ բանտարկել
տուաւ:
Ասիկա Ռէուֆ բաշայի, պաշտօնակալ ըլ-
լալէն առաջ վերին անդրադատակ արարքն է,
հաւանական է որ այդ արդարութեան համար
պաշտօնակալ եղած է:

Ստանուէն նոր լուր չ'կայ:

ՄԻՍ ՍԹՕՆ

Վատարողիկն Միս Սթօն, մակեդո-
նական յեղափոխականներու հռչակաւոր գե-
րուհին, 4 Պօլսոյ օսմանեան միսիօնարու-
թեան դանձապետին հետեւեալ աղետարչ
նամակը կը ղրկէ, որուն մէջ Միս Սթօն
անձնուրացի մը պարզութեամբ իր կը
պատմէ իր գերեզմանութիւնը:

« Երբեք չ'եմ բարեկամս:

« Նամակ կը գրեմ ձեզի իմացնելու հա-
մար թէ Սեպտ. 3 ին գերի բռնուցեայ բազմա-
թիւ գիւղեալ անձերէ — 40 հոգի: Պանսթէն ձու-
մասալ գացած ատենս, տասներկու քի չափ դա-
սատներու եւ աշակերտներու հետ: Ինձի ըն-
կերուհի տուած են Տիկի Քաթիբին Յիւլա:
Մեզի գերի բռնելու միակ պատճառը մեզմէ
փրկանք պահանջել է. պահանջուած փրկանքը
25000 օսմ. ոսկի է եւ այդ գումարը 18 օրէն
պիտի վճարուի հնչուս գրամով, առանց թուրք
եւ Պուլիար կառավարութեանց իմաց տալու:

« Տիկի Յիւլայի վիճակին համար է որ
պայմանաժամը 18 օր որոշուած է, որովհետեւ 3
ամիսէն զաւակ պիտի ծնի:

« Թուրք բանակ մը մեզ կը հալածէ. Տօթի.
Հասթէլէն կը խնդրեմ որ Պօլիս երթայ եւ այն-
պէս ընէ որ փրկանքը Սամաթիոյ մէջ վճարուի:

« Մեզի գերեզմանը մարդիկը առաջ հետե-
րին շատ ակնհայտով եւ յարգանքով վար-
ուեցան, բայց եւ այնպէս թուրք գիւղերներուն
եւ պաշտպանութեան մեզ հալածել սկսելէն եւ
փրկանքը ուշանալէն ի վեր մեր կացութեանը

բոլորովին փոխուած է, հետեւաբար կը խնդրեմ
որ փութաբար պահանջուած գումարը ղրկել:

« Կը խնդրեմ որ հրաւիրէք թուրք կառա-
վարութիւնը որ մեզ հալածելը զաղքեցնել տայ,
այսպէս ոչ մեր առեւանդիչները պիտի սպան-
նեն մեզի:

Աղօթեցէք մեզի համար, աստուծով հան-
գիտաւ եւք: »

Հնէն ՍԹՕՆ

Պէտք է աւելցնել հոս որ առեւանդող
աւազակներուն պետք, հռչակաւոր ոճրա-
գործ մըն է Տուչօ անուամբ: Իր աւազակա-
խումբը Օր. Սթօնը առեւանդած միջոցին
թուրք զինուորի համազգեւտով ծպտուած
էր:

Միւս կողմէն կ'իմացուի թէ Տիկին
Յիւլա կանխաժաման տղարեքը ունեցեր է
աւազակի մը խրճիթին մէջ, չ'յուսացուիր
որ խեղճ արարածը ապրի:

ՈՐԲԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

« Դահլիճի Հայոց Որբասիրաց Ընկերու-
թեան » Պատ. Դիւանին կողմէ հետեւեալ
նամակները և հաշուեկէիտը կ'ստանանք ի
հրատարակութիւն:

Աւելի մը անգամ մը եւ կրկնելով թէ
Դահլիճի Հայոց Որբասիրաց Ընկերութիւնը՝
անդրանիկը կազմուած բոլոր Որբասիրաց
ընկերութեանց, հաստատուն քայլերով կը
յուսալարիմէ և արդիւնաւոր ու օգտակար
չըլաններ բոլորած է, ինչպէս յետագայ
հաշուեկէիտն պիտի հասկցուի:

Հետեւաբար մեր յարկի կը ընթերցողայ
լուր՝ ուշադրութիւնը կը հրատարակէ Որ-
բասիրացի բոլոր գործառնութեանց վրայ,
և՛ եթէ հարկ կայ, հրաւէր կ'ուղղէր մեր
Պատ. և բարեւէր ազգայնոց, իրենց մաս-
նակցութեամբ փութալ քայլերով ընկե-
րութիւն մը, որ իր գործունէութեամբ և
արդիւնաւորութեամբ ամեն վատահու-
կը ներշնչէ և արժանի է բարոյական և նիւ-
թական օտանդակութեանց:

... Խմբագրութիւն « Արշալոյս » ի
Աստ

Կը խնդրենք որ հաճիք հետեւեալները հիւ-
ընդհալել Պատ. Թիւթիք յառաջիկայ թիւերէն
միտոյն մէջ:

Ընկերութեան Դիւանի եւ Գործ. Ժողովոյ
պաշտօնավարութեան օրինաւոր շըլանը լրացած
ըլլալով, ստորագր. Սեպտ. 15 ին հայ Լսարան-
ընթերցատան սրահը գումարուած տարեկան
Ընդհ. Ժողովոյ մէջ հետեւեալ ընտրութիւնները
եղան:

Կազմութիւն Ընդհ. Ժողովոյ Դիւանի
Տիարք

ՍԵՂՈՎ. ԳԱԻԹԵԱՆ ՄԿՐՏԻՉ ՊԱՆԻՉԵԱՆ
Ա. Ատենապետ Բ. Ատենապետ
Ս. ՕՏԱՊԱՇԵԱՆ Կ. ԵՐԶՆԿԱՅԵԱՆ
Ա. Ատենապետ Բ. Ատենապետ

Անդամք Գործ. Ժողովոյ
Տիարք

Ա. Մ. Պէրպէրեան, Կ. Շահրդեան, Ա.
Պետրոսեան, Կ. Վարդանեան, Կ. Գրիգորեան, Ա.
Շէհերեան, Ա. Կոկանեան:

Տիար Ա. Պետրոսեան իր գրաւոր հրատա-
րականք մատուցած ըլլալով՝ անոր տեղ նշա-
նակուեցաւ համեմատական ըուէ շահրդեան Տ.
Ա. Ս. Բրուտեան:

Գործ. Ժողովոյ Բրդ. նիստին մէջ կատար-
ուած պաշտօնաբաշխութեան արդիւնքը:

Ս. Մ. Պէրպէրեան Ատենապետ
Ա. Ս. Բրուտեան Ատենապետ

Կ. Գրիգորեան Գանձապահ
Կ. Շահրդեան Համարակալ

Տիարք
Կ. Վարդանեան, Ա. Շէհերեան, Ա. Կոկանե-
ան, Խորհրդակալներ:

Ազգ. Բաղ. Պատ. Ժողովոյ Հոկտ. 2. նստին
մէջ վաւերացեալ շըլանաւարտ Գործ. Ժողովոյ
երկամեայ հաշուեկէիտն եւ անոր յարակից նոյն
Պատ. Ժողովէն Դիւանին եկած նամակին օրե-
նակները ղրկելով Ձեզ ի հրատարակութիւն՝
տեղեկագրել կը թողունք յառաջիկային առան-
ձին տեսարկաւ մը լոյս բերել որբերու պատ-

կերներով միասին սպազրել տալով, երբ անոնք
հասնին մեզ:

Մնամք Եարդանօր
Որբասիրաց Ընդհանուր Ժողովոյ
Բ. Ատենապետ Ատենապետ
Կ. ԵՐԶՆԿԱՅԵԱՆ Ս. ՊԱՆԻՉԵԱՆ

ԱՌԱՋԵՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԵՊՊՊՊՊՊ

ԴԻՒԱՆ ՔՍՂ. ԺՈՂՈՂՈՑ
ԱԶԳ. ԳԱԻԹԻ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԹԻԻ 205

Գահիրէ 7 Հոկտ. 1901

Մեծպատիւ
Տիար Ատենապետ Պատ. Ընդհանուր Ժողո-
վոյ Որբասիրաց Ընկերութեան Հայոց
Ի Գահիրէ

Մեծպատիւ Տիար,
Ստացած եւ Ազգ. Գաւառ. վարչութեան
Պատ. Բաղադրական Ժողովոյ ուշադրութեան
ներկայած եմ Պատ. Դիւանիդ 25 Սեպտ. 1901
թուականօր, թիւ 10/5 եւ 11/6 երկու պաշա-
տագրերը, որոց առաջնով Առաջնորդարանին կը
մատուցանէք ընկերութեան շըլանաւարտ
Գործ. Ժողովոյ երկամեայ գործառնութեանց
տեղեկագրին ու հաշուեկէիտը, վերջինս երկու
օրինակի վրայ, որք վաւերացուցած էին ընդ-
հանուր Ժողովոյ արարչոյ Սեպտ. 15 ի նիստին
մէջ, իսկ երկրորդ գրութեամբ կը հարգէք
Ժողովոյ նորընտիր Դիւանին եւ Գործ. Ժողո-
վոյ անդամաց անուններն ի գիտութիւն:

Ժողովը տեղեկագրի պարունակութեանց
գումարութեամբ վերահասու եղաւ ընկերութեանց
բարեք վիճակին, ինչ որ հարգուած էր ար-
դէն իրեն բերանացի, ընկերութեանց Սեպտ. 15 ի
ընդհանուր Ժողովոյ նիստին՝ վարչութեան կող-
մէ ներկայացուցիչ կարգուած Տիար Ն. Ս. Ա-
ղաբաբեանին (\*) կողմէն: Ժողովը կը զովէ
ընկերութեան պաշտօնակալ մարմնաց անդու-
լանքերն որբարինամ գործին յառաջանան
համար:

Ժողովը զարձեալ իր ամսոյս 2 ի նիստին
մէջ յետ քննութեան վաւերացուցած ըլլալով
ընկերութեանց երկամեայ հաշուեկէիտը, անոր
մեր կողմէն հաստատուած մէկ օրինակը այսօր
կը վերադարձնենք ձեզ:

Կատարեալ յաղորդութեան մաղթելով ընկե-
րութեանը ազգագուս նպատակին եւ ողջունելով
հայրական սիրով՝

Մնամ աղօթարար

Առաջնորդ Եղիպտոսի Հայոց
ՅՈՒՎԷՓ ԵՊՊՍՎՈՊՈՍ

(\*) ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ. — Ազգ. Վարչու-
թեան Պատ. Բաղադր. Ժողովոյ ներկայ նա-
մակով անոր կողմէ ներկայացուցիչ կար-
գուած անձին վերոյիշեալ անունը, պէտք
է որ Որբասիրաց Ընկերութեան անդամաց
մեծագոյն մասին ուղը գրուէ և խորհրդա-
ծուութեան նիւթ մատակարարէ:

Թէ ինչու. բացատրենք:
« Արշալոյս » ի քաղաքի ընթերցողնե-
րէն ամենն ալ — բազմաթիւ արխայտմնե-
րն անգամ, — գիտեն որ Որբասիրաց ըն-
կերութիւնը կազմուած էր 1899 Մայիս 1
ին, երբք չորս ամիս առաջ անոր կազմա-
կերպիչներուն մտածմանց միակ առարկան
ըլլալէ վերջ:

Որբասիրացը դանդաղ քայլեր առած
էր ժամանակ մը. յետոյ որոշ կազմակեր-
պութիւն մը ստացած էր Դիւանի եւ Գործ.
Ժողովոց ընտրութեամբ:

Ժամանակ մը համերայնութիւնը տի-
րած էր, ու օր մ'ալ Պատ. Բաղադր. Ժողո-
վոյ վերոյիշեալ ներկայացուցիչ Պ. Նազա-
րէթ Աղապարմի պախարակելի մէկ ընթաց-
քին պատճառաւ, որոյ նմանները, ինչպէս
չատերը գիտեն, իր ընդհանրական կեան-
քին մէջ քիչ պատահած բաներ չ'էին, ըն-
կերութեան անդամաց մէջ տիրող խաղա-
ղութիւնը վրդոված էր:

Երբք չորս ամիս մ'ալ այս տարտամ
վիճակին մէջ շարունակելով ընկերութե-
նը, հարկ անհրաժեշտ համարուած էր Ընդ-
հանուր Ժողովի մը գումարումին, տիրող
անհամաձայնութիւնները բաւաւաւ համար-
1899 Դեկտ. 10 ի կիրակի օրը Աղա-
թալի թաւրոնին մէջ Որբասիրաց Ընկե-

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԹՐԱՆՍՎԱԼ

Հարա Ափրիկէի մէջ իրաց վիճակը վարդապետ ըլլալէ շատ հետո Ե Անգլիացիներուն համար Ե Տարի մ'առաջ Չամբարը լէն կը յայտարարէր թէ պատերազմը վերջացած էր, ու պատերազմը գեռ կը շարունակուի ։ Բաբի գաղթականը գրեթէ իր բոլոր տարածութեանը մէջ պատերազմական օրէնքին ենթարկուած է ։ Ազատ հաղորդակցութիւնը բոլորովին կաշկանդուած է ։ մասնաւոր թղթակցութիւնները կառավարութեան ձեռքով վար կը դրուին ։ արդիւնաւոր Ե տեղացիներուն ու թ օրէն աւելի պաշար չ'ունենալ, ու ձիերը ամբողջութեամբ պատածութեան մղելու համար չ'էր կրնար լաւագոյն միջոց մ'ընտրած ըլլալ ։ Երկու հասարակագետութեանց հոլին վրայ Անգլիական կառավարութիւնը աւելի քան երբէք փշալից ճամբու մը մէջ կը գտնուի ։ Զօրավար Լօթթերը Ե իր թիկնապահ Շօփմանի գնդակահարութիւնը ինչպէս այն մտրակուելու տանջանքը որ այս Բօմանտէն բռնուած գերիներուն տրուեցան պատերազմական օրէնքներու սահմանէն անդին կացուին ։ Ոչ Լօթթերը Ե ոչ ալ Շօփման, երկուքն ալ զինուոր պատերազմի առաջին օրէն իսկ, չ'էին կրնում իրենց պատերազմի մողի հանգամանքը, հակառակ մինչ իսկ Անգլիոյ կողմէ Օրանտի Ազատ Պետութեան կամայական իւրացումին ։ Լօթթերը Ե Շօփման ապստամբներ չ'էին, Ե իրենց մահը չի շղթայի քաջութիւնը նախագահ Շօթայնի Ե իր հայրենավրէժ արի զինակիցներուն ։

Երբէք ընդգիծութեան գաղափարը աւելի զօրեղ, աւելի զայրալիր եղած չէ Պիւրկէրներուն քով ։ Անգլիացի շովէններ կը ջանան մտրուեցնել հանրային կարծիքը Անգլիացի բանակը որ կը պատերազմի Հարա Ափրիկէ, ու թափախ է այլ Ես ։ Անցած են այն գիւցազնական օրերը, երբ, Վօտտէր Ռիվերի արեւմտեան կողմէ վրայ, Սկոթլանդի Հայրանջրու ներք քաջօրէն կը խողալորուէին ։ Երբ, Թուրքիայ վրայ, Պուլ-

րութիւնը կը գումարուի ։ կը քննէ անց ու գործ խնդիրները, կը կարգայ Իրանին ու Գործ ։ Ժողովոյ մէջ փոխանակուած գրուածութիւնները մանրաշնչին եղանակաւ կը հետակ ընկերութեան շարքէ դարձած են իրարիկներուն Ե ուր ուրեքն ճշդելէ, հաստատուել ու համազուեղէ վերջ թէ Պատ ։ Բազաբ, Ժողովոյ այսօրուան ներկայացուցիչը Պ ։ Ն ։ Ազգաբարեան որ այն ատենուան ընկերութեան Իրանը կը կազմէր իր գրադարութեան օգնականովը, ընկերութեան շատ աննպաստ խաղեր խաղալ կ'ուզէ ։ ուստի պարտաւանաց բանաձեւով մը, 28 ներկայից ստորագրութեամբ կը հրատարակէ Իրանը Ե Ընկերութեան ղեկը կը յանձնուի ներկայ շրջանաւոր Իրանի Ե Գործ ։ Ժողովոյ ։

Աւելորդ է ըսլ թէ պարտաւան Ե հրատարակուցեալ Իրան ։, իրեն հետ ունենալով իր ճաշիկն, եկեղեցի Ե մէկ երկու մեծ ու պղտիկ բարեկամներ, քանի մը աւելի սէր անդամաբաժին ալ վճարելէ գաղթած էին ։ ու այս իբր ճնշում ի գործ գնել կ'ուզէին այն ատենուան Գործ ։ Ժողովին վրայ ։

Բանի մը օրէն Աւաշտորարանէն վաւերացեալ հոգատար որբանամ անուն անձ ընկերութիւն մը կազուած էր, իր վաւերացումը կազմութեան թուականէն քանի մը օրեր առաջ հազնելով ։ Ե ինչու չէ չէ որ ընկերութիւն մը կազմուելէն օրեր առաջ վաւերացուելու ծիծաղելի արարքն ալ ամօթ պէտք չէ համարուի Ե քիպտոսի մէջ ։

Ահաւասիկ որբասիրացի համառօտ պատմութիւնն Ե քրակացիները ուրեքն ։

Վերջ զօրքերը մրցելու ելած էին անտառիկ գիրքերը բռնելու համար ։

Բիշնէրի բանակը, այսու հանգերձ, գեռ պատիւ կը բերէ Անգլիական գրօշին ։ Անոր զօրքերը գեռ բոլորովին վհատած չեն, բայց կրնայ մօտեցած ըլլալ վհատուած ժամը եթէ երբէք, ինչպէս կ'ըսուի, Պօթրները գեռ երկար ատեն կարենան ընդգիծմանը կուրին, Ե եթէ Աթրիանեսներու ապստամբութիւնը համաճարակի ծայրէ իծալը ։

ՏԸ ՈՒՆԹԻ ՄԷԿ ՆԱՄԱԿԸ. — Ժրնէվցի Տիկին մը որ երկար ժամանակ թրանսվալ բնակած է Ե անձամբ կը ճանչնայ Պօթր զօրավարը, նամակ մը ստացած է անկէ Մօտորֆօնթայն 13 Հոկտ. թուագրեալ ։ նա մակագիրը այսպէս կը գրէ ։

« Ձեզ գիտեր թէ պատերազմը երբ պիտի վերջանայ, Ես Ես իմ մարդիկս որոշած ենք ցմա՛հ պատերազմի ։ Ինծի զրկած լրագրիներէն էլ կը հասկնամ թէ պատերազմիկները երկուստէք զիրար կամբաստանեն գերիներու հանգէպ գէշ վերաբերում ունենալու յանցանքով, երբէք մի հաւատար, լրագրիներուն բոլոր գրածը ճիշտ չէ ։ Երկու կողմէն ալ պարագաներուն ներածին չար բանտարկեալները լաւ կը նայուին ։

Մեղի պէտք եղածին չար պաշար ունինք, որ Անգլիացիներէն գրաւած ենք, միայն ձիերը շատ կը տառապին 10-12 ժամ տեղը բռնի չուեր ընկնուս համար ։

« Աստուած զիս ընտրեց եղբայրներու հրամայելու համար, մինչև ծայրը պիտի գիմեմ ։

ԽՈՒՆՈՂՆՈՒՄԻ ՕՐ ՄԸ. — Այս պահուս Անգլիոյ մէջ պաշար կը մղուի, որպէս զի կառավարութիւնը ազգ խոնարհեցման օր մը որոշէ, որուն միջոցին ազգ քներ պիտի կատարուին անեն եկեղեցիներու մէջ պատերազմի վերջանալուն համար ։

Ուէսթմինսթրի Կանոնիկոսը Թայլոգին երկար նամակ մը ուղղած է որուն մէջ կրտէ թէ պատերազմի դժուարութիւնները ըստ բաւականի յայտնի կրնն պատերազմին տեղութիւնը ։ Պատերազմի շարունակութեան մէջ անկանոն բան մը չկայ Ե բան

գամները թուով աւելի էին քան ո՛ր Ե է պաշտօնական անձանց թիւը ։ Ինչու՞ ուրեքն ընդունեցին Պատ ։ Բազաբ ։ Ժողովոյ կողմէն ընտրուած քննիչը, երբ սա՛ իրենց մէջէն հրատարակուցուած մէկն էր ։ ընկերութեան գէ՛մ դաւած էր ։ Ինչու՞ գիտողութիւն չ'ըրին Բազաբ ։ Ժողովոյ այդ որոշման գէ՛մ ։ Ինչու՞ մուցան իրենց գրած ստորագրութիւնները ։ Ինչու՞ գարձեալ անոր նոր անգամակցութիւնը ընդունուցեալ ։ Ինչ տը Էնթրիկներ գարձած էր մինչև այսօր ։ արդեօք Պ ։ Ն ։ Ազգաբար իր անցեալ ըրածներուն համար ներողութիւն խնդրեց յատենի Ընդհ ։ Ժողովոյ ։

Եթէ այս վերջին եղանակը ի գործ չը գրուեցաւ Ե չ'արձանագրուեցաւ որբասիրաց Ընկերութեան տամարներուն մէջ, ըստորագրեալ իբր անգամ մը որբասիրաց Ընկերութեան, կը բազաբ թէ Պատ ։ Բազաբ ։ Ժողովոյ ըրած որոշման Ե ընտրութեան գէ՛մ, որ որբասիրաց Ընկերութեան անգամաց տուած որոշումը շատեղու Ե անձնասիրութիւնը վերադարձու հանգամանք ունի, Ե թէ՛ որբասիրաց այն անգամներուն գէ՛մ, որոնք անցելոյն մէջ որոշում մը ստորագրելէ վերջ, պաշտօնական խոշոր սխալ մը տեղի ունենալու պատճառ դարձած են, լաւելով ։

Այս խնդրոյն մէջ Պատ ։ Բազաբ ։ Ժողովը այնպիսի մեղադրելի չէ, որովհետև անգամներուն մեծագոյն մասը կ'ամ հայերէն լեզուն չի գիտեր, կամ՝ եթէ քիչ շատ գիտէ, հայերի գործերով զբաղելու ժամանակ չ'ունի ։ Իսկ ինչ ըսենք որբասիրացի անգամներուն որոնք Ե երբ պէտք է բողոքելը ։ չ'են գիտեր եղբր, Ե հարս պէն անուջ մնալու դատապարտած են ինքզինքնին Ե ուր միայն խանութի մը շտրհակալ-

մը չ'ուցենք թէ Աստուածային պատուհասի մը պիտի հանդիպին ։ Բայց սակայն այդ որոշուած օրը պէտք է հաստատուի որ պիտի ըլլայ այն ամօթալից Ե անտրդ վարմանը ։ Երբուն համար՝ որով Անգլիացի ժողովուրդը կը վերաբերուի Հարա-Ափրիկէի մէջ իբր հաւատարմական հպատակներու հետ, որոնց չարչարանքները առ ոչինչ կը համարէ Անգլիա ։

Վէսթմինսթրի Կանոնիկոսը չ'ըսեր թէ ինչ պէտք է ըլլուի անձուէր հաւատարմականներուն հանգէպ, բայց կրտէ թէ այդ պատերազմին դադարման ամենալաւ միջոցը Պօթրներու խաղաղութեան ընդունելի առաջարկներ ընելն է ։ պատերազմը անմիջական կերպով կը դադարի, որովհետև Պօթրները չ'են որ խաղաղութիւն ընելը կը մերժեն այլ Անգլիացիները ։

ԲԻՐԻԿԷՐ ՆԱՄԱԿԱՆԻ ԿԵՆՈՒՄԷՆ. — Մանրագէպ մը Բրիւկեր նախագահին վրայ ։ Զորս տարի առաջ թրանսվալի Ֆրանսական գաղթականութիւնը Եօհաննէսպոլի մէջ պարահանդէս մը կուտար յուլիս 14 ի տօնին առթիւ ։ Ֆրանսական հիւպատոս Պ ։ Օպէզի խնդրանքով, ծերունի նախագահ, որ աշխարհիկ կեանքէ հետու կապրի, չ'էր մերժած իրեն ուղղուած հրաւերը ։ Ինչու կրնէր զիրար կը գերազանցել իրենց ուսմանը արդուզարգով ծաղիկզարգ օրահին մէջուղ ։ Որոշուած ժամուն, Պ ։ Բրիւկէր կը հասնի հիւպատոսին Ե քանի մը պաշտօնական անձերու հետ, Ե առանց սպասելու ընդունելութեան ձեւակերպութիւններուն, առաջ կը անցնի Ե պարասրահին դուռը կը բանայ իր ձեռքով ։

Տէ՛ր Աստուած, կը գոչէ յանկարծ ընկրկելով Ե իսկոյն գոցելով դուռը ։ Կրկնները գեռ չեն հագուած եղբր ։

Պարահանդէսին կազմակերպիչները աւճն կողմ մարդ կը զրկեն առատ տանութիւնը Ե écharpesներ ճարելու համար, որպէս զի սեփօթները ծածկուին, Ե բարեմիտ նախագահը այն ատեն միայն կը յօժարի պարասրահ մտնել, երբ իմաց կուտան թէ արդուզարգերը աւարտած են Ե Ե

եաց արժանացած է Բազաբ ։ Ժողովոյ Պ ։ քննիչը, անուշտ յաճախորդ լինել խոստանալով անոր ։

Բողոքելու ատենը Ե եղանակը զիտանանք, որպէսզի կարենանք ազատութիւն ձեռք բերել վերջ, անոր յայելին ալ գիտնալ ։

Ե ԹՈՐՈՒՄԱՆ

ԼՍՍՐԱՆ ԸՆԹԵՐԱՅՈՒՆ

Ընկերութեան Գործ ։ Վարչութիւնս պատիւ ունի ծանուցանել ընթերցասէր հասարակութեան թէ, առաջիկայ կիրակի առաւօտ ժամը 10 1/2 ին Լուսրան մը տեղի պիտի ունենայ ընթերցասանս մէջ ։

Պիտի տոնեսխոսեն

Եզնիկ Բահանայ Պալուսի

Տ ։ Տնքթ ։ Յակոբեան Ե ուրիշներ

Ճառասօսութիւններու ընդհատումի պահուն երգեցողութիւններ պիտի կատարուին ։

Միւրելի է մեզ յուսալ թէ կրթասէր ազգայիններ պիտի փութան իրենց ներկանութեամբ պատուել ու քաջալերել Գործ ։ Վարչութիւնս, մանաւանդ այսօր երբ շեքմ փախաքն ունինք ընթերցաստուներ փութարկելու էլ պէտք չ'է մօտ կեդրոն տեղ մը ։

Կը խնդրուի նոյնպէս այն ամեն ժողովրդասէր ազգայիններէն՝ որոնք մինչ այսօր ձեռնպահ մնացած են, որ հաճին իրենց անգամակցութիւնը չի զլանալ ընկերութեանս միանգամ ընդ միշտ ընդունելով կեդրոնավայր մը ունենալու անհրաժեշտ պէտքը ։

Գործադիր Վարչութեան

Ատենապետ Նախագահ

Ս ։ ՕՏԱՊԱՅԵԱՆ ԵԶՆԻԿ ԲՉ ։ ՊԱՆՈՒՆԻ

ԱԶԳ ։ — Տեղւոյ անձկութեան պատճառաւ որբասիրաց Ընկերութեան հաշուեկիւար յաջորդ թուով ։

Երկրորդին մինչև վերջը, անընդհատ նե՛շտուութիւն կը խնդրէ որ անգիտակցաբար ներս մտած էր՝ երբ արիւնները գեռ կ'իստովին հագուած էին ։

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

— 0 —

Բրեքորս 27 հոկտ. — Պօրսի Անանքը դիւրաբար կ'ստանայ անբարեկամ անարարներու շնորհիւ, որով իր ցանցաւ շոխակներ կրցին խուսափել Անգլիական գորսխուսերու հանդիպումէն ։ Ամբողջ երկրին ստրածորները վրայ արիւնուած կ'ալ փշալից ու նեղ ճանքաւ անցնող որոնց մէջ մարդիկ եւ ապրի դիւրօտէն կը քրտնոտին, Պօրս իր հետ ունենալով սակաւարիւ մարդիկներ, Ամբարտաւ գեաց ուր Եայ Պիւրկիս եւ քրտնալայի շարժուն կ'առաջարկուի կ'ստանաւ են անտանտայ կերպով ։

Մասրիս 27 հոկտ. — Պ ։ Սակաւարի ստորջրային վիճակը գեշ է ։

Լոնսոն 28 հոկտ. — Բաբիէն հասած Անանքներ կը հարողնէն քի Կօրիւն գեղապետը հարեանցիորէն դասած ու գեղակահարեց տուած է Բաբի մը գերիներ, որոնք խաբի հաւազգետ կ'րած էին ։

ՏՕՐԱՐՈՐ Ա ։ ԵՄԲԱՐԵԱՆ

Այս անգամ հաստատուած ըլլալով ի Գահիբէ, կը բնակի Երա Ապտիւլ Աղիզ փոքրը, Ապտիւլի պահականցիներ քով, թիւ 4 բնակարանի երկրորդ յարկը ։

Հիւանդ կ'ընդունի ամեն օր կէս օրէ առաջ ժամը 9-11, իսկ կէս օրէ յետոյ 3-5 ։ Ուրախ օրերը աղբատու ձրի դարմանում ։

Մասնաւոր խնամքով կը դարմանեն ներքին գործարանաց Ե մեղանցքի ( ափրոգիտեան ) հիւանդութիւններ ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Ֆրանսական նախկին պատերազմական նախարար զօրավար Կալիֆէ մարքիզի վրայ հետեւեալ անէքտօթը կը պատմէ Ե փրկար ։

« Երբ զօրավար Կալիֆէ գերի բռնուելէն յետոյ Գերմանիոյ մէջ անշուքօրէն կանցնէր իր ժամանակը, Կալիֆէի իշխանին սուրհանգակը եկաւ իրեն տիրող կողմէն առաջարկելու թէ արգեօք զօրավարը բանի մը պէտք ունէ՛ր իր գերութիւնը նուազ տաժանելի դարձնելու համար ։ Զօրավարը շնորհակալութեամբ պատասխանեց թէ բանի մը պէտք չունէր, ապա միտքը փոխելով ըսաւ ։

« Մէկ բան մը միայն կը խնդրեմ, քանի որ Գերմանիոյ զէնքերը յաջող են՝ հետեւաբար պիտի պարտաւորուիմ երկար ժամանակ գեռ գերի մնալու ։ Եթէ չեմ կրնար Գերմանացի գերի զօրավարի մը հետ փոխանակուիլ, գտնէ՛ք ։ Բարձրութեան կը խնդրեմ որ Բրոսիւր Ն ։ Վ ։ արտօնութիւնը ստանայ որպէս զի ֆրանսա դաւանամ Ե հոն իբր պարզ գիւնտը կուրիմ ։

« Մերունի Կիլեօմ թագաւորը յուզուած այդպիսի առաջարկէ մը, քիչ մնաց որ պիտի ընդունէր բայց Մօլթէք մերժեց ըսելով ։

— Ոչ, ոչ, այդպիսի արարք մը Ֆրանսայի նման ասպետական երկրի մը մէջ վտանգաւոր օրինակ մը կրնայ ըլլալ ։

Պէտք է հաս աւելցնել թէ Կալիֆէ 1870 ի Ֆրանսական բանակին ամենէն կտրին զօրավարներէն մին էր, ինքն էր որ նահանջող Ֆրանսական բանակին աղատելու համար Բէշօֆէնի մէջ երբ անգամ կատարի յարձակումներ ըրաւ Գերմանական բանակին դէմ, հետ, ֆրանսական հեծելազուգը հիւանդ աղաղակներ խնց ամբողջ Գերմանական բանակէն Ե ծերունի Կիլեօմ թագաւորը բլուրի մը վրայէն գիտելով այդ հիւանդի անձնագրուածեան տեսարանը ah ! les braves gens ! գուած էր քանիցս ։

ԲԱՆԱՍԷՐ հետեւեալ ծանուցումին հրատարակութիւնը կը խնդրէ իր պաշտօնակիցներէն .

ԲԱՆԱՍԷՐ ԱՄՍԱԲԵՐԲ

ԱՁԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

« Բանասէր » յարգելով ժողովրդական և գրական անձոնց դիմումները, կը խոստանայ յառաջիկայ տարեշրջանէն (1902 Յունուկար) սկսեալ հետեւեալ նոր ծրագրով հրատարակուիլ .

Ա. (Բանասէր) նախ պիտի հրատարակէ ազգային յառաջադիմութեան վերաբերեալ խմբագրական տեսութիւններ .

Բ. Բանասիրական յօդուածներ՝ ազգային պատմութեան և մատենագրութեան վերաբերեալ .

Գ. Օտարազգի նշանուոր հանճարներու գրուածոց թարգմանութիւններ .

Դ. Հայ աշխարհագրական և ազգագրական յօդուածներ .

Ե. Նոր հրատարակուած գրքերու վերայ քննադատական տեղեկութիւններ .

Զ. Լեզուաբանական և ստուգաբանական յօդուածներ .

Է. Ազգային լրագրութեան մէջ տեսնուած կարևոր յօդուածներու վրայ գիտողութիւններ .

Ը. Գիտական նորութիւններ .

Մասնաւոր կերպով կը յայտարարենք մեր ընթերցողաց որ Յունուարէն սկսեալ « Բանասէր » վերադառնալ ծրագրով ԱՄՍԱԲԵՐԲԻ պիտի վերածուի, իւրաքանչիւր անգամ տալով 32 էջ . եւ ինչպէս որ կանխախոստացեր էինք . « Բանասէր » ի ինչ ինչ յօդուածները պատկերազարդ պիտի հրատարակենք .

Թերթին գինն առ այժմ նոյնը կը մընայ, այսինքն տարեկան 15 Ֆր. — 6 ռուբլի . բայց ի՞նչ բաժանորդներու բաղմութիւնն զմեզ խորախօսէ այն ատեն կը խոստանանք 10 Ֆրանքի իջեցնել .

Մեր հասցէն է BASMADJIAN  
112, Bd. ROCHECHOUART.  
PARIS (18)

ՄԹԱՌ ԼԱՅՖ

ԼՈՆՏՈՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնեալ 1843

Բացարձակ ապահովութիւն . — Չափաւոր ապահովագրի հնութեան համաձայն շահու առաւելութիւն . — Իրականաց պահպանութիւն՝ ապահովագրի վըճարմանց յապաղումի պահուէն . — Ձախող պարագաներու մէջ անմիջական հաշուեկարգարութիւն . — Ծանու բաժանում մինն Հիմն ՏԱՐԻՆ մէջ անգամ .

Ս. ԼԵՅՈՆԱՐ

Ընդհանուր ներկայացուցիչ Եգիպտոսի

ԳԻՐԲԵՐ ԵՒ ԹԻՐԹԵՐ

Ամերիկացիական մեր ուղղայնաց կը ծանուցուի թէ՛ Երբորդ տարեշրջանի սկիզբէն « Արշալոյս » ի Գործակալութիւնը ստանձնած են ի Շիքահօ, Մ. Մ. Գարակապուտեան և ընկ. որոնք բացի « Արշալոյս » էն .

Բաժանորդագրութիւն կ'ընդունին նաեւ հետեւեալներէն .

ԱՆԱՀԻՏ, ազգային, գրական և գեղարուեստական ամսագրեր . տարեկան բաժանորդագրի տուար 2 .

ԳՈՒԹԱՆ, հանգեա հողագործական և ճարտարաբանական, որ կը հրատարակուի փարիզի մէջ ամիսը մէկ անգամ : Տարեկանն է Տ. Յ. ճանապարհածախսով միասին .

ԱՐԱՐԱՏ մեր միակ հին կրօնական Ամսագիրը՝ որ կը հրատարակուի Ս. Եղմիածին : Տարեկանն է մէկ տուար միայն .

Նամակագրով կ'ընդունին, երբ ապսպրանքը 50 սէնթ և պակաս է . իսկ աւելին համար պէտք է գրամ զրկել Money orderով և կամ registeret նամակով : Յանձնարարութիւնները կանխիկ կը կատարուին .

Տեղեկութիւններու համար դիմել

M. M. KARAGAVOORLIAN et Co.  
61 West Huron St.  
CHICAGO III

ԳԱՌԼՈ Մ - ՊԱՍՄԱՃԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐԻԿ

ՕՔԷԼ ՄՈՆՖԵՐԱԹՕ ԱՂԵՔԱՆՂԻՒԱ

Պատիւ ունինք ծանուցանել տրոյց հասարակութեան թէ վերջերս հաստատուած ըլլալով հրատարակելու կ'ընդունինք և կ'ստանձնենք ամեն տեսակ և ամեն ազգի ապրանքաց յանձնարարութիւնը, ինչպէս ժամացոյցի, գործարկեանց, արեւելեան և արեւմտեան զանազան տեսակ գունաւոր և ճերմակ քարերու, Գոլոմպիական փոստիկաններու, ինչպէս նաեւ գրուած և անգիր խողովակներու — գովան — (մեծաբանակ) . և արտական նրբաշիւս կողովակներու և հոտեղենաց եւայլն .

Մասնաւորապէս համաձայնած լինելով Պոլսոյ Անտէլիպ (Մարտիրոս Պէլլէրեան) ստան հետ, որուն ապրանքները մեծ գնահատման արժանացած են նոյն իսկ արտական հրատարակաց վըրայ, միշտ ի միջեր ունինք յիշեալ հանրածանօթ տան ամեն տեսակ ապրանքները . ինչպէս Re-producteur Andelip (Փօստիկանի ասեղ) որ անմրցելի է հրատարակին վրայ, և Գոլոմպիական փոստիկաններու ներկայացուցիչ Մ. Պասաէօնի սքանչազման առարկայն եղած է .

Մեր արամադրութեան տակ ունինք Անտէլիպի գործարանին զանազան նուագներն . ինչպէս Մանդիլե, Քալեն, Ուր եւն . և փոստիկանի համար տանկական եղանակներու վրայ չափուած հին և նոր վարպետ երգողներու ընտիր փոխաններ .

Կ'ստանձնենք կատարել Մաքսային ամեն տեսակ գործողութիւնք փութով և չափաւոր փոխարինութեամբ .

Կը գանձենք զանազան երկրներու փոխանակ սրբեր .

Բաց աստի ընկերութիւնս Լոնտոնի, Պոլսոյ, Գահիթի, Եաֆայի և Երուսաղէմի մէջ թըրթակիցներ ունինալով, կ'ստանձնէ այդ տեղերուն համար ամեն տեսակ ներածում և արտածում : Մեր հասցէն է

CARLO M. BASMADJIAN et Cie. Okelle Monferrato  
Alexandrie

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՍՏՈՒԹԻՉ Ժ . ՆԱՅՏԱԼԵՆԿԻՐ

Պալաքի փողոց . Խաչնտարի սեփականութիւն, Պրիմօլ Սթէյլի ճիշդ գիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից .

Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԲԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ ՈՒՆԻ Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ՆԵՐՆ ԵՆ և ստոյնցէ մինչեւ ցարց 17,000,000 ծախուած է .

400 և աւելի վիպակներով և մեքայներով վարձարուած, Երաշխատեալ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ


ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախնդիսին մէջ ստացած է .

ՀԱՊԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԳՈՒՆԻԲՈՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՒՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒԱՐԱԿԱՆ ԱՐԳՈՒՆԵԱՅ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե. Բ. ՆՏԻՎԱԿԱՆ ՏՆԱ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ ի յասկանչիս .



Ձրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԵՐ մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ .

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւն ինչմեքենայից և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ԳԻՆ ՉԱՓԱՌՈՐ

ՏՃԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՖ

ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՄՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՌՈՒՄԸ ԴՐԱՄԱԳՆՈՒՄ 1 ՄԻԼԵՍ 563,961 ՉԱՍՐ ՏՐԱՆՔ

Ապահովագրեալներուն կը բաժնէ անենէն աւելի շահաբաժինները . Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց դուրսարած է 3 ՄԻԼԵՍ 563,961 Ֆր. որ գրեթէ աշխարհի ուրիշ որեւէ ընկերութենէ մէկ միլեար աւելի է . Պ. Պ. ԳԻՐԶԻՅ ԵՒ Ժ. ՎԱԼՖԻՇ ԸՆԴՀ. ներկայացուցիչք ի Գահիթէ

Աշխարհի մէջ գանուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրատարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ . ԱՆԹ. Թ. ՈՒԱԼԻ գլխաւոր գործակատար յ'Աղի քսանդիտ .

ԳԵՐՈԳ ԵԿԱՌՕՑ Դեր-Գործակալ ի Գահիթէ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԱՐՇԱԼՈՅՍԻ

ՇԱՐԱ ԱՊՏԻՒԼ-ԱՉԻՉԻ ՍԿԻՉՈՐ  
Օսկանիյե Դեղարանին դիմացի փողոցին մէջ  
ՀԹՅՆԾԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՒԷՆ  
Ծ. ԹՈՐՈՍԾԱՆ

ԱՐՇԱԼՈՅՍԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻՆ մէջ կը պատասխանիմ Հայերէն և Երուսաղէմ լեզուներով ամեն տեսակ հրատարակութիւններ, մասնաւոր խնամով .

Գիրքեր, Կանոնագիրներ, տեղեկագիրներ, շրջաբերականներ, Հրատարակութեան, Տոմարներ, Այցեխարտեր, Մանագրներ և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ կ'ընդունին յախատր գներով .

Յանձնարարութիւնք եղած պահուն պէտք է համաձայնուած գներն կերպ կանխիկ վճարել և մնացեալը աւարտմէն անմիջապէս վերջ .

Տպարանը բաց է ամեն օր առաջօրեան ժամը 7 էն 12 և կէս օրէ վերջ 2 էն 7 ը .

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ						ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ					
ՎԱՐՁԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ						ԿԻՐԱԿԻ 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1901					
ԿԻՐԱԿԻ 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1901											
4725	2889	5623	795	117	149	8801	6266	5460	4113	8413	3263
677	1534	1786	2074	2158	3028	439	722	503	7728	1889	7193
3533	4170	4447	4891	5293	5621	5826	4986	7600	7870	7666	1010
6276	6337	6347	6764	6806	7039	6474	6317	6503	7660	9692	6847
7249	7309	8035	8142	9376	8249	9803 8759 8482					

ՏՊԱՐՈՒԹԻՒՆ Ե. ԲՈՐՈՍԱՆԻ